

## Տ. ՌՈՒԲԷՆ ԱԲԵՂԱ ԶԱՐԳԱՐՅԱՆ

(ավազանի անունը՝ Վաչիկ)

Ծնվել է 1979 թ. դեկտեմբերի 5-ին Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում:

1986-1993 թթ. սովորել է Հրազդանի № 11 միջնակարգ դպրոցում:

1993-1996 թթ. միջնակարգ կրթությունը շարունակել է Արմավիրի մարզի Առատաշեն գյուղի դպրոցում:

1996-2001 թթ. ուսանել է Սևանի Վազգենյան Հոգևոր դպրանոցում:

2001-2002 թթ. կրթությունը շարունակել է Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2001 թ. դեկտեմբերի 25-ին՝ Սուրբ Ստեփաննոս Նախավկայի տոնին, Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Գերաշնորհ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի:

2002 թ. հուլիսի 1-ից աշխատանքի է անցել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տեղեկատվական համակարգում՝ որպես գործավար քարտուղար, իսկ նույն թվականի դեկտեմբերի 1-ից՝ Մայր Աթոռի «Գարեգին Ա» հայագիտական-աստվածաբանական կենտրոնում:

2003 թ. հունիսի 10-ին ծառայության է անցել ՀՀ Զինված Ուժերում՝ որպես հոգևոր սպասավոր:

2004 թ. փետրվարի 3-ին Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում, ձեռամբ Գերաշնորհ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա: